

ՀԱՅ ՊԱՏՄԱԿԱՐՔԱԳՐԱԿԱՆ ՀՆԱՏԻՊԵՐԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՄԱՆ ՀԱՍՆԱԿԱՐԳԸ XVII-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ*

ՆԱԶԵՆԻ ԴԱՐԻՔՅԱՆ

Արվեստի տատմության դոկտոր (Փարիզ)

Մատենադարան, ԵԳՊԱ դոցենտ

ԱՆԻ ԵՆՈՔՅԱՆ

Արվեստագիտության մագիստրոս

ԵԳՊԱ դասախոս

XVII-XVIII դարերը շրջադարձային նշանակություն ունեն հայոց տատմության մեջ, քանի որ նշանավորում են նոր ժամանակների սկիզբը հայ տնտեսական և մշակութային աստիճաններում, որն ուղեկցվում էր ազգային ինքնագիտակցության ձևավորմամբ և ազգային-ազատագրական շարժման աշխուժացմամբ՝ քաղաքական հարթակում: XVII դ. երեսն են գալիս հայ բուրժուազիան և նոր մտավորականությունը, ինչում, իհարկե, մեծ դեր ունեն Նոր Ջուղայի խոշոր վաճառականության խավը: Վերջիններիս ազդեցությամբ մշակութային և քաղաքական աստիճաններում հայ հոգեւորականությունն աստիճանաբար սկսում է զիջել իր դիրքերը: XVIII դարում եվրոպական, հատկապես՝ անգլիական առաջադեմ մտքի ազդեցությամբ հայ իրականության մեջ ձևավորվում է լուսավորչական գաղափարախոսությունը, որն ուներ քաղաքական, ազատագրական տայքարի շեշտված ուղղություն. օրակարգային առաջնահերթ խնդիր է դառնում Նայաստանն օտար գավթիչների լծից ազատագրելու և հայ տնտեսականությունը վերականգնելու գործը: Ուստի, հայ լուսավորիչները ոչ միայն քարոզում էին ժամանակի առաջավոր գաղափարները, այլև աշխատում էին նախատարաստել և գլխավորել ժողովրդի ազատագրական տայքարը¹:

Նայրենասիրական ոգու բարձրացման, ազգային գաղափարախոսության սերմանման և ազատագրական տայքարի նախատարաստման նդատակների բերումով այս շրջանում մեծ կարեւորություն է ստանում տատմական ժանրը: Նրատարակ են գալիս մի շարք հայ հեղինակներ, ինչդիսիք են՝ Առաքել Դավրիժեցին, Մինաս Նամիդեցին, Երեմիա Քյոմուրճյանը, Գրիգոր Դարանաղցին²: Միաժամանակ, նորովի ուշադրության են արժանանում հայ դասական տատմագիրները, հատկապես՝ հայկական ոսկեդարի գործիչները՝

* Նոդվածը տատրաստվել է Ա. Ենոքյանի 2015 թ. ԵԳՊԱ-ում տաշտդանած մագիստրոսական թեզի հիման վրա, որ կոչվում է «Նայ հնատիղ գրքերի տատմավարքագրական տատկերագրողումները XVII-XVIII դարերում» (ղեկավար՝ Ն. Դարիբյան):

Մովսես Խորենացին, Ազաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Չենոբ Գլակը, Ղազար Փարոեցցին, Եղիշեն³: Վերջիններս դառնում են հայոց վերածննդի խորհրդանիշները: Ինչդեռ հաճախ է հանդիպում տատանակալի տարբեր դարաշրջաններում քաղաքակրթական վերածնունդ ապրող հասարակություններում, XVII դարում ազգային զարթոնքի ձգտող հայ միտքն ու մշակույթը նույնպես իրենց նախահիմքերն էին որոնում անցյալի փայլուն, հերոսացված էջերում՝ վերհիշելով եւ ըստ դասանցի վերամեկնաբանելով տատանական իրադարձություններն ու կերտարներին:

Չարթոնքի ճարտարապետները որդես բարձրագույն չափանիշ եւ ներշնչանքի աղբյուր են ընտրում հատկապես V դարը. այս ժամանակ է ձեւավորվում հայ տատանագրությունը, որի առանձնահատկությամբ է տայմանավորված հայոց գրավոր ժառանգության մեջ տատանության ժանրի գրադեցրած մեծ ու կարեւոր նշանակությունը⁴: Ոսկեդարյան տատանիչները ջանացել են սահմանել եւ թրծել հայ նոր, քրիստոնեական ինքնությունը, ըստ որի հայերը, դարձի գալու տրահից սկսած, կարող են համարվել Աստծո ընտրյալ ժողովուրդ, իսկ հայոց տատանությունը՝ Աստվածաշնչի, Նախախնամության տատանության շարունակություն⁵: Ըստ այդմ՝ հայ տատանագրական երկերում առավել կամ տակաս չափով շեշտված է այն գաղափարը, որ հայ ժողովուրդը, իր բարձրագույն առաքելության գիտակցությամբ զինված, անկոտրում տայքարել է իր հավատի, դավանանքի, ինքնության, ազգային միասնության եւ տետականության վերականգնման համար:

Նայ տագրությունը XVII-XVIII դարերում

Նայ ազգային ինքնագիտակցության զարթոնքը խորապես կառված էր գրքի ներկայության հետ⁶, եւ ուստի տատահական չէ, որ XVII-XVIII դարերը նաեւ հայ տոագրության աննախադեղ զարգացման ժամանակաշրջան են: Նայ տոագիր գիրքը մեծ փոփոխություններ է կրում կազմարարական, ձեւավորման, ընթերցողների շրջանակի, բովանդակային եւ այլ իմաստներով: Լիովին կազմակերպվում է տիտղոսաթերթը, զարդանախշերը եւ տատկերները ստանում են եվրոտական օրնամենտներին բնորոշ ծաղկային եւ բուսական մոտիվներ եւ ավելի տարգեցվում՝ համեմատած նախորդ շրջանի գրքերի, որոնք առավել մոտ են ձեռագրային ավանդույթներին⁷:

Նարկ է նշել, որ Նայաստանի նոր տատանության փուլում հայության բարախող կենտրոնն ամբողջությամբ տեղափոխվել էր ծովափնյա մարզեր՝ Միջերկրական ծովի ավազանից մինչեւ Ղնդկական օվկիանոսի ափերը: Ուստի բնական է, որ հայ տոագրությունը եւ տոարանների հիմնումը սկզբնավորումից մինչեւ 1800 թ. սերտորեն կառված են եվրոտական եւ ասիական նավահանգստային քաղաք-

ների հետ՝ Վենետիկ, Ամստերդամ, Մարսել, Կոստանդնուպոլիս, Չմյունխա, Լիվոռնո, Նոր Ջուրա, Մանկտ Պետերբուրգ, Մատրախան, Մադրաս, Կալկաթա⁸ (նկ. 1):

Նայ տղագրության սկզբնավորումից մինչև XVIII դ. հայկական գրքերի փորագրատասկերները կատարվում էին միայն եվրոպացի վարդետների ձեռքով: Տղագրական հարուստ ինդուստրիայով հայտնի բոլոր հայ գրահրատարակիչները հայկական հրատարակչական գործընթացում ներգրավեցին հանրահայտ տառաստեղծ-փորագրիչ մասնագետների. Էլզեիրների դոկտորի վարդետ Քրիստոֆել վան Դիյկին («*Ֆունտիկ Քրիստոֆելու «...ազգապայման», այսինքն՝՝ գերմանացի»*), Մատթեոս Վանանդեցու տղարանի տառաստեղծ՝ հունգար Նիկոլայուս կամ Միկլոշ Կիշին, Քրիստոֆել վան Չիխեմին, Ադրիան Սկոնեբեկին: Վերջիններիս զարդափորագրությունները հսկայական դեր ունեցան հետագա հայ գրահրատարակչության զեղարվեստական ոճավորման գործում⁹: XVIII դարում հայկական տղագրության՝ դեղի Արեւելք տեղաշարժելու հետ մեկտեղ աստարեզ են իջնում հայ փորագրիչ-հրատարակիչները, որ թերեւս կարելի է համարել այս շրջանի հայ տղագրության ամենակարեւոր իրադարձությունը¹⁰: Առաջին հայ փորագրական դոկտորը ձեւավորվում է Կ.Պոլսում: Պոլսյան տղագրությունը, ի տարբերություն վենետիկյանի եւ ամստերդամյանի, ավելի քիչ ազդեցություն էր կրում եվրոպական տղագրական ավանդույթներից: Այստեղ հայերը մշակում են միանգամայն յուրահատուկ տիտոգրաֆիական ոճ: Պոլսյան ամենահայտնի եւ ակնառու հայ տղագրիչը Գրիգոր Մարզվանեցին էր, որ առաջինը լինելով հայ միջավայրում եւ տիրադետելով փորագրման, ձուլման, տղագրական տեխնիկային՝ իր երկարատեւ գործունեության ընթացքում մեծ ազդեցություն ունեցավ հայ տղագրական դոկտորի ձեւավորման վրա: Պոլսեցի հայ վարդետները, հետեւելով նրա փորձին, սկսեցին բացել երկու տասնյակի հասնող նոր տղարաններ, ուր ինքնուրույն եւ սեփական հմտությունները զարգացնելով՝ տղագրեցին XVIII դարից մեզ հասած ամենամեծաթիվ հայկական գրականությունը՝ մոտ 300 անուն գիրք¹¹:

Պատմագրական երկերի տղագրությունը XVII-XVIII դարերում

XVII-XVIII դարերում, տղագրության քանակական աճին զուգընթաց ընդլայնվում է նաեւ հայ գրքի ժանրային եւ բովանդակային շրջանակը. ծիսական եւ կրոնական երկերից բացի լույս են տեսնում անտիկ խոշոր փիլիսոփաների հատորներ, որոնց հայերեն թարգմանությունները առկա էին դեռեւս V դարից¹², աշխարհիկ բովանդակությամբ տեքստեր, գիտական եւ հանրամատչելի գրականություն: Պատմագրության ժանրի նկատմամբ

ուշադրությունը բնականաբար մեկնարկում է նաեւ դատմական գրքերի հրատարակությունը, որ աննախադեղ մեծ թափ է ստանում:¹³

Առաջին տղագիր հայերեն դատմագիրքն Առաքել Դավրիժեցու «Գիրք դատմութեանց» ամստերդամյան հրատարակությունն է՝ կատարված Ոսկան Երեսնցու կողմից: Ժամանակակցի՝ իր ժամանակի դատմության մասին (1602-1662 թթ.) գրքի լույս ընծայումը ցույց է տալիս Ոսկանի լայն մտահորիզոնը եւ թերեւս իր ներքին քաղաքական տրամադրությունները¹⁴: Նոր շրջանի հայոց դատմագրության մեջ ամենախոշոր ձեռքբերումը, իհարկե, համարվում է Միքայել Չամչյանի «Նայոց դատմություն» եռահատորյակի տղագրությունը՝ 1784, 1785 եւ 1786 թթ., Պիետրո Վալվազանիի աշխատությամբ: Չամչյանի «Նայոց դատմությունը» Մխիթարյանների որդեգրած գաղափարների եւ մեթոդաբանության վառ օրինակ է, որ փորձում է համատեղել եվրոպական արդիական շարժումները՝ հայկական ավանդույթների հետ¹⁵:

Իսկ ամենակարեւոր երկերը, որոնք հայ տղագրիչների առանձնահատուկ ուշադրությանն են արժանացել, Խորենացու եւ Ագաթանգեղոսի *Պատմություններն* են՝ որոշեալ ազգի ծննդաբանության եւ հավատի հաստատականության կուռ վկաներ: Մովսես Խորենացու «Նայոց դատմության» առաջին հրատարակությունը, որ վերնագրված է «Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան յօրինեալ ի Մովսիսէ Խորենացոյ, յեռանծ վարդապետէ, եւ յոգներալստ քերթօղաօրէ...», կատարվել է 1695 թ. Ամստերդամում, Թովմաս Վանանդեցու կողմից: Գրքի տիտղոսաթերթը սեւ եւ կարմիր երկգույն տղագրությամբ է, ունի երեք փորագիր դատկեր, զարդատառեր եւ զարդանախշեր¹⁶:

XVII դարի ընթացքում Խորենացուն վերագրվող եւս երեք գիրք է տղագրվել. 1668-ին՝ Ամստերդամում, 1683-ին՝ Մարսելում եւ 1698-ին՝ առանց տղագրության վայրի եւ տղարանի հիշատակման, որոնք ունենին «Աշխարհացոյց, Աղուէսագիրք, Նամառօտ վիդասանութիւն» ընդհանուր վերնագիրը: XVII դարում իրականացվող ազգային եւ մշակութային վերելքի ծրագրում Մովսես Խորենացու *Պատմության* կարեւորությունը փաստարկվում է նաեւ այն բանով, որ դատմահոր երկի՝ մեզ հասած 48 ձեռագրերի մեծ մասն այս դարում կատարված ընդօրինակություններ են¹⁷: Նաջորդ դարից մեզ հայտնի են Խորենացու երկու հրատարակություն. 1736 թ.՝ Լոնդոնում եւ 1752 թ.՝ Վենետիկում, երկուսն էլ կատարված օտարազգի տղագրիչների կողմից:

XVIII դարում ակնհայտ ուշադրության կենտրոնում են հայտնվում Գրիգոր Լուսավորչի վարքը, Տրդատ թագավորի եւ հայոց դարձը, Նայաստանում քրիստոնեության տարածումը ներկայացնող երկերը: Ըստ այդմ՝ լույս է ընծայվում այդ դատմության հիման վրա ստեղծված եւ հետագա զարգացումներ ստացած «Դաշանց թուղթ» կոչվող դատմական բնույթի տեքստը, որն ուներ

հայ եւ կաթոլիկ եկեղեցիների միասնությունը խորհրդանշող բովանդակություն¹⁸: Առաջին տղազիր «Դաշանց թուղթը» լույս է տեսել 1695-ին Վենետիկում՝ Բորտոլի տղարանում: Այն վերնագրված է այսպես. «Նամառօս Պատմութիւն, Տնօրինականաց Տեսն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ի Սբ. քաղաքն Երուսաղէմ, այլ եւ թուղթն սիրոյ եւ միաբանութեան, Կոստանդիանոսի եւ Տրդատայ թագաւորաց եւ սրբոցն Սեղբեստրոսի եւ Գրիգորի Լուսաւորչին մերոյ»:

Գրիգոր Լուսավորչի վարքն ու հայոց դարձի հանգամանքներն ընդգրկող՝ Ագաթանգեղոսի «Նայոց ղատմությունն» այսօրիսով ստանում է առաջնահերթ կարեւորություն՝ տղազրվելու համար: Այս գրքի ամենաառաջին եւ ամենագեղեցիկ տղագրությունը կատարվել է 1709-1710 թթ., Կ. Պոլսում, Գրիգոր Մարզվանեցու ձեռքով: Ագաթանգեղոսի «Նայոց ղատմության» տղագրության ղատվերը Մարզվանեցին ստացել էր Էջմիածնից, Ալեքսանդր Ա Ջուղայեցի կաթողիկոսի կողմից, որը նրան էր ուղարկել Ագաթանգեղոսի մի ձեռագիր օրինակ¹⁹:

Պատմագրական հնասիրտերի նկարագարումները

Նայրենի մշակույթի վերածնության եւ ազգային-ազատագրական ձգտումների իրագործման հովովություն հատկապես կարեւորվում է ղատմավարքագրական գրքերի ղատկերագարումն համակարգը: Պատկերների կազմում հիմնականում ընտրվում են ղատմական այն դեմքերն ու դեղքերը, որոնք հայ ինքնության, ազգային ոգու բարձրացման համար խորհրդանշական բնույթ են կրում: Այդպիսիք են, օրինակ՝ Նայկի հաղթանակը Բելի նկատմամբ, Նայոց Դարձի ղատմությունը, հայ գրերի գյուտը, V դարում հայ դղրության, թարգմանչական դղրոցի եւ վարդաղետության հիմնումը²⁰ եւ այլն:

Նայկ եւ Բել

Կարծես ղատահական չէ, որ հայոց ղատմության էջերից դրվագ ներկայացնող առաջին փորագրաղատկերը Միքայի Չամչեանի *Պատմութիւն Նայոց եռահատղրյակի առաջին գրքի* (1784 թ.) 48-րդ էջին տեղաղրված սյուժետային նկարն է (նկ. 2): Այն ղատկերում է Մովսես Խորենացու երկում նկարաղրված՝ Նայկի եւ Բելի ղատերաղմի ամենախորհրդանշական դրվաղը, երբ Նայկը նետով խոցում է թշնամուն եւ իր խիղախ արարքով ծնունդ տալիս հայ աղգի գղղությանն ու աղաղային: Փորագրաղատկերը լավաղղոյնս հաղորղում է ճակատամարտի էուղղունը: Չորքերը տեղակայղված են գետի երկու կողմերում, հետեւի ժաղղոտ լեռան ստորղոտին ղատկերղված է Բելի *«յանղղուղն եւ անձոռնի գորղութեանը անըղխին, որղղէս հորձան ինչ սաստիկ ընղ գառ ի վայր հեղեղեղայ»*²¹: Առաջին ղղանում այն տեսարանն է, երբ Նայկն արղեն խոցել է Բելին եւ իր գիմղորներին մատնացղոյց է անում նրան:

Նայկի եւ Բելի ղաատունում արծարծված կարեւորագոյն գաղափարը՝ ազատության ընտրությունը, թեկուզ ղատերագմի սղառնալիքով, խաղաղ, բայց հղատակ գոյոյոյան հնարավորոյոյունից՝ միանգամայն համահունչ էր ժամանակի հեղափոխական ոգուն եւ հայ մտավորական խավի ազգային-ազատագրական ղայքարի տեսլականին: Գրավոյուն ունի նաեւ մի խորհրդանշական մանրամասն. հետեւի ղլանում նշմարվում է Սասիս սարը՝ Նոյյան տաղանով: Նավանաբար ցանկանալով հաղորդել Նայկի՝ «յերկիրն Արարաղայ» հաստատվելը, այն միաժամանակ նաեւ շեշտում է հայ ազգի աստվածաշնչյան ծագումը:

«Արարատ լեռը Նոյյան տաղանով» ղատկերագրոյոյունը XVIII դարի հայ տղագրական արվեստում մեծ տարածում է գտնում հատկաղես տիտղոսաթերթերի, ինչղես նաեւ Լուսավորչի տեսիլքի եւ Նայոց դարծի տեսարաններում:

Փորագրաղատկերը մաքուր եւ բարծրակարգ մշակմամբ է կատարված, հավանաբար՝ եվրողացի վարղետի կողմից եւ ներշնչված եվրողական արվեստից, քանի որ Նայկի եւ զինվորների հանղերծանքը հիշեցնում է հռոմեական գորավարի եւ լեգեոնի սղառազինում:

Գրիգոր Լուսավորչի վարի եւ

Նայոց դարծի ղասմոյոյան ղատկերագրոյոյունը

Նայ ղատմավարքագրական հնատիղ գրքերի այոմեսային ղատկերագրոյոյան մեջ ամենամեծ ուշաղրոյոյունը հատկացված է Նայոց դարծի ղատմոյոյանը, Գրիգոր Լուսավորչի վարքին եւ վարղաղետոյոյանը. ինչ խոսք, IV դարի սկզբին տեղի ունեցած շրջաղարծային այս եղելոյոյունը վճռորոշ եղավ հետագա ամբողջ հայոց ղատմոյոյան համար:

Գրիգոր Լուսավորչի ղատկերագրոյոյունը հանղիղում է միջնաղարյան հայ արվեստի բղոր տեսակներում՝ բարծրաքանղակներում, որմնանկարչոյոյան մեջ, ձեռագիր մատյաններում: Առաջին հայրաղետին նվիրված ղատկերաշարքերը հիմնականում ընղգրկում են նրա կյանքի, Նոիփսիմյանների նահատակոյոյան եւ Նայոց դարծի բղոր գլխավոր դրվագները: Ընղումված է համարել, որ ամենավաղ ղատկերները մեզ են հասել վաղքրիստոնեական քառակող կղթողներից. ըստ ավանղական մեկնաբանոյոյան՝ VI-VII դդ. թվագրվող Օծունի մահարծանի եւ Թայինի կղթողների վրա, այլ ղատկերների շարքում, քանղակված են նաեւ Լուսավորիչը, խոզաղեմ Տրղատը եւ Խոսրովիղոլստը, Նոիփսիմյանց կոյսերը²²: Ճիշտ է, այս մեկնաբանոյոյունը վերջերս վերաքննոյոյան է ենթարկվել²³, եւ ըստ նոր առաջաղրված տեսակետի՝ կենղանաղեմ կերղարի ներքո հարկավոր է ճանաչել ոչ թե խոզագղոլս Տրղատին, այլ շնագղոլս սուրբ Քրիստափորին, իսկ Խոսրովիղոլստի փղխարեն՝ Գրիգոր Լուսավորչի աշակերտին: Աղղուհանղերծ, Գրիգորի շարշարանքների եւ Նոիփսիմյանների նահատակոյոյան տեսարանների

դատկերումը վաղ շրջանի եկեղեցիներում վկայված է VII դարի հայ մատենագիր, դավանաբան Վրթանես Քերթոզի *Նաղագս Պատկերամարտից* աշխատությանը, որտեղ, ի թիվս այլ ընդունված դատկերաչառերի, նա նշում է նաև Նայոց դարձի հետ կապված կերտարներին. «*Իսկ յեկեղեցիս քրիստոնեից եւ ի հարկս վկայից Սատոյ տեսանենք նկարեալ գտորբն Գրիգոր եւ աստուածահաճոյ շարչարանք իւր եւ սուրբ առաքինութիւնք եւ գտորբ կանայսն զԳայիանէ եւ զՆոբիսիմէ՝ հանդերձ ամենայն սուրբ ընկերաք եւ յաղթող նահատակութեամբ...*»²⁴:

Գրիգոր Լուսավորչի ամենավաղ դահդանված դիմադատկերը թվագրվում է X դարով եւ գտնվում է Կոստանդնուպոլսի Սբ. Սոֆիա տաճարում, ուր Նայոց Մկրտիչը նկարված է համընդհանուր Եկեղեցու ճանաչված մյուս հայրադէտների կողքին²⁵: Նետաքթիր հորինվածք է ներկայացնում մեկ դար հետո, Ղոռոմոսի վանքի ժամատան գմբեթի ներքին դատին տեղակայված հարթաքանդակը, ուր Գրիգոր Լուսավորիչը դատկերված է իր նշանավոր ժառանգների՝ Արիստակեսի, Ներսեսի եւ Սահակի հետ²⁶: Նետագա դարերում նրան դատկերել են թե՛ հայկական, թե՛ բյուզանդական որմնանկարներում²⁷: Ինչդեռ վկայում է Անիում Տիգրան Ղոնենցի կառուցած Սուրբ Գրիգոր եկեղեցու արեւմտյան դատին դահդանված որմնանկարը, արդեն XIII դարի սկզբին ձեւավորված եւ շրջանառության մեջ է եղել Գրիգորի վարքին եւ Նայոց դարձին նվիրված դատկերագրական շարք, որ տարբեր զարգացումներով հասել է մինչեւ XVIII դար²⁸: Վերջինների շարքում հարկ է առանձնացնել «Սբ. Տրդատի եւ Գրիգորի հանդիպումը Սբ. Կոստանդիանոսի եւ Սելբեստրոս Պառի հետ» դատկերագրական հորինվածքը, որ զարգացում է ստացել վերոհիշյալ «Դաշանց թղթի» զարգացման հետ²⁹: Լուսավորչի դատկերման օրինակներ հայտնի են նաև հայ մանրանկարչությունից. նրա առանձին կերտարը հանդիպում է հատկապես *Ճաշոցների* եւ *Նայսմավորքների* մեջ³⁰:

XVIII դարում հայ տղագիր գրքերում Լուսավորչին եւ Նայոց դարձը ներկայացնող փորագրադատկերները կարելի է դայմանականորեն բաժանել հետեւյալ խմբերի. ա) Գրիգոր Լուսավորչի կերտարը, բ) Գրիգոր Լուսավորչի շարչարանքների եւ Տրդատի մկրտության դատկերումը մեկ համատեղ նկարում, գ) Գրիգորի տեսիլքը եւ հայ ժողովրդի հոգետր կենտրոն Սբ. Էջմիածինը:

ա) Լուսավորչի առանձին դատկերման երեք օրինակ հանդիպում են Գրիգոր Մարզավանեցու տղագրության մեջ, որտեղից հետագայում մի քանի անգամ եւս վերատպվում են տարբեր գրքերում: Պատկերագրական հորինվածքով անչափ յուրահատուկ է 1706 թ. *Յայսմավորքում* դատկերվածը (նկ. 3): Կենտրոնում՝ ճարտարադետական կամարաշարի ֆոնին, լուսաճաճանչ ճառագայթներով լուսաված, շքեղ գահին բազմած է Սբ. Գրիգորը՝ դիմահայաց դիրքով, այժմեքը բարձրացրած՝ օրհնելու ժեստով, իսկ ձախ ձեռքի գավազան-

նիզակով խոցել է գետնին գալարվող օձը: Ինչդեռ ներքեւի գրության մեջ է կարդացվում՝ թունավոր օձ-վիշապին Գրիգորը խոցել էր Խոր Վիրապի գնդանում: Գահը շրջադաստող հրեշտակները շեշտում են դատկերվողի սուրբ լինելը եւ երկնային աշխարհին դատկանելը: Նետաքրքրական է Գրիգորի կերտարի մեկնաբանումը. նա հայ հովվադաստի շքեղ, զարդարուն հագուստներով է եւ խույր է կրում, սակայն դիմագծերի տիղմն ավելի շատ հիշեցնում է արեւելյան ծագում, հատկապէս՝ «մոնղոլական» աչքերով:

բ) XVII-XVIII դարերում, Գրիգոր Լուսավորչի չարշարանքների, Տրդատ թագավորի ու Նայոց մկրտության տեսարանները հայ գեղանկարչության մեջ դառնում են ամենատարածված թեմաները, որոնց դատկերագրությունը սփռվում է եկեղեցական դեկորատիվ-կիրառական արվեստի ոլորտից մինչեւ սրբանկարչություն եւ որմնանկարչություն³¹: XVIII դարում այն տարածում է ստանում նաեւ հայ հնատիպ գրքերում, ուր ձեւավորվում է այս տեսարանների համատեղ ներկայացման դատկերագրական որոշակի սկզբունք, չնայած համդիտում են նաեւ Գրիգորի չարշարանքները եւ Նայոց դարձը ներկայացնող առանձին փորագրատատկերներ: Նայ հնատիպերի շարքում ամենաառաջին եւ ակնառու օրինակներն են 1700-ականների սկզբին տոպագրված՝ Մարզվանեցու *Յայսմավորքի* փորագրատատկերներից երկուսը (նկ. 4, 5):

Առաջին դատկերի կենտրոնական մասում Գրիգոր Լուսավորիչը մկրտում է ծնկաչոք Տրդատ թագավորին եւ արքայաքույր Խոսրովիդուխտին, իսկ դատկերի եզրերով տեղադրված են Գրիգորի 14 չարշարանքները ներկայացնող փոքր դրվագներ: Դեղքերի եւ խորհրդանիշների համաժամանակյա դատկերման մնանատիպ վառ օրինակ է 1731 թ. Վիեննայում փորագրված եւ առանձին տողված (70 x 90 սմ)՝ Գրիգոր Լուսավորչի չարշարանքների եւ սքանչելագործության տեսարանը (նկ. 6): Տղագրությունը Մահտեսի Յոհան Մելիքի որդի Յակոբինն է: Դատկերի ներքեւում Լուսավորիչը մկրտում է Տրդատին, որի աջ կողմում ծնկաչոք եւ ձեռնատարած Խոսրովիդուխտն է եւ այլք: Ներմուծված են նաեւ տեսիլքից տեսարաններ: Վերեւում՝ կենտրոնում, նկարված են Նայրը, Որդին եւ Սբ. Նոզին՝ ամոլերի վրա: Ամոլերից ճառագայթներն իջնում են դեղի Էջմիածնի տաճարը, իսկ տաճարի երկու կողմերում Սբ. Նշիփսիմն եւ Գայանե եկեղեցիներն են, որոնց ճարտարապետական տիղմն ավելի արեւմտյան է եւ հարազատություն չունի Էջմիածնի իրական տաճարների հետ: Դատկերի ձախ կողմում Սեդոսի լեռն է, որի քարայրերից մեկում ճգնել է Սբ. Գրիգորը, իսկ աջ կողմում՝ Մասիսը՝ Նոյյան տառանով: Իսկ ներքեւում Մծբնայ հայրադաստն է եւ իր վանքը³²: Նույն դատկերագրությամբ, XVIII դարից հայտնի են մի քանի հայ եկեղեցական սրբադատկերներ, վանական վարագույրներ, մասնատուփեր:

Իսկ XVIII դարի երկրորդ կեսի վեներտիկյան հայկական գրքերում Տրդատի

եւ Նայոց մկրտության տեսարանը դաստիարակում է առանց շարժարանաց շարքի եւ ավելի մոտ է եվրոպական դաստիարակական համակարգին: Այդդիսին են, օրինակ, Մատթեոս Եղոկացու *Վարք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին* (Վենետիկ, 1749), կամ Խորենացու *Պատմություն Նայոց* (Վենետիկ, 1752 թ.)³³ գրքերում դաստիարակած Տրդատի եւ Նայոց մկրտության տեսարանները (նկ. 7): Երկու դաստիարակներն էլ կոմոդիցիոն կառուցվածքով գրեթե միանման են, փոխված է միայն ճարտարապետական ֆոնը: Երկուսում էլ Լուսավորիչը կանգնած է աստիճանաձեւ դաստիարակողանիստ եւ օրհնում է Գրգորին, Խոսրովիդուխտին եւ խմբված հայ ժողովրդին: Եվ մկրտության դահլիճ իջնում է Սուրբ Նոզին՝ լուսավորված երկնային լույսով: Ամենայն հավանականությամբ, դաստիարակների համար փորագրիչն ազդվել է Ֆրանչեսկո Չուգնոյի (1709-1787) համանուն կտավից, որ դաստիարակում է Վենետիկի Սբ. Ղազար կղզում:

Յայսմավորքի երկրորդ փորագրադաստիարակում Լուսավորիչը, գահին նստած, օրհնում է Տրդատ թագավորին եւ Խոսրովիդուխտին (նկ. 8): Նորինվածքի միջավայրը Էջմիածնի տաճարն է, որից վերեւ՝ այց կողմում, Նայր Աստվածն է՝ ամոլերի մեջ բազմած, իսկ ձախ կողմում հրեշտակների դասն է: Տաճարը ողողված է երկնքից իջնող ճառագայթների լույսով: Այստեղ Սբ. Գրիգորն արդեն կարգված է հայոց քահանայադատ եւ իր օրհնությունն է տալիս հայոց արքայական ընտանիքին, այստիպով նաեւ՝ ամբողջ հայ ազգին: Տրդատի ծնկաչոք խոնարհումը հայոց առաջին կաթողիկոսի առջեւ խորհրդանշում է հայ դաստիարակական աշխարհընկալման մեջ հոգեւոր իշխանության գերակայությունը աշխարհիկ նկատմամբ³⁴:

Գրիգոր Մարգվանեցու հիշյալ փորագրադաստիարակն ակնհայտ նմանություն ունի 1596 թ. վանեցի Խաչատուր Խիզանցու ծաղկած *Նայսմավորքի* մի մանրանկարի հետ (նկ. 9): Նայտնի է, որ մինչեւ տողազիր գրքի փորագրիչ-վարդետ դառնալը, Մարգվանեցին եղել է մանրանկարիչ-ծաղկող, ընդօրինակող գրիչ: Ամենայն հավանականությամբ, նրան ծանոթ է եղել Խիզանցու այս մանրանկարը: Երկու դաստիարակներում ամբողջովին նույնն է կոմոդիցիոն հորինվածքը, բացի հրեշտակների դասի դաստիարակումից, որ բացակայում է մանրանկարում: Կատարողական տեխնիկայի առումով Մարգվանեցու փորագրադաստիարակը, անշուշտ, ավելի զարգացած եւ վարդետորեն է իրագործված: Նա մեծ ուշադրություն է հատկացրել մանրամասների մշակմանը՝ հագուստներին, զարդարանքներին, ճարտարապետական կառույցին: Մարգվանեցու տողագրած՝ Ագաթանգեղոսի *Նայոց դաստիարակում* գրքից (1709-1710) օրհնության տեսարանի եւս մի գրավյուրա է հայտնի: Սբ. Գրիգորն օրհնում է Տրդատին, Խոսրովիդուխտին եւ Աշխեն թագուհուն, իսկ նրանց ոտքերի մոտ դաստիարակված է վարազը՝ ոչ միայն որդես Տրդատի դաստի, այլ նաեւ որդես հեթանոսության խորհրդանիշ³⁵:

զ) Գրիգոր Լուսավորչի տեսիլքն Ագաթանգեղոսի գրքի ամենախորհրդավոր հատվածն է, որտեղ, հղում կատարելով Երուսաղեմ քաղաքին, խորհրդանշական դասկերներին միջոցով ցույց է տրվում Նոր, քրիստոնյա Վաղարշապատի հիմնադրումը՝ ի դեմս Աստծո Կաթողիկե եկեղեցու եւ Նոբիսիմյանց կույսերի մատուռների կառուցման, ինչդեռ նաեւ Գրիգորին նախասահմանված առաքելությունը՝ որդես Նայոց մկրտիչ եւ առաջին հայրապետ³⁶: Այս «Նոր Երուսաղեմը» հիմնադրվում էր որդես համայն հայոց հոգեւոր մայրաքաղաք, սրբազան կենտրոն, բայց նաեւ՝ որդես Քրիստոսի Երկրորդ Գալստյան ըղձալի վայր³⁷: Տեսիլքում նկարագրված դասկերը, ուր չորս խաչակիր սյուներն իրար են կառվում լուսեղեն կամարներով, որոնց վրա բարձրանում է զմբեթածեւ աստվածակերտ խորանը, մեկնաբանվել է որդես Կաթողիկե մայր եկեղեցու ճարտարապետական տիպաբանության նախօրինակ:

XVII-XVIII դարերում Գրիգորի տեսիլքի դասկերման բազում օրինակներ հայտնի են հատկապես կոնդակների նկարագրագրումներից եւ եկեղեցում գործածվող ծիսական առարկաների հարդարանքից՝ խորանի վարագույր, հայրապետական գահ, շուրջառ, խնկաման եւ այլն: Այն տարածում է գտնում նաեւ եկեղեցիների գեղանկարչական հարդարանքում³⁸, որտեղից էլ հավանաբար անցնում է հայ հնատիպ գրքերի դասկերագրագրման մեջ: Չնայած գեղարվեստական ամենատարբեր լուծումներին՝ բոլոր օրինակներն ունեն դասկերագրական ընդհանուր կառուցվածք. կենտրոնում գտնվում է Սբ. Էջմիածնի Մայր եկեղեցին՝ շրջադաստված Սբ. Նոբիսիմե, Գայանե եւ Նձնանի (այժմ՝ Շողակաթ) եկեղեցիներով, մի կողմում հրեշտակը Սբ. Գրիգորին ցույց է տալիս հրաշալի տեսիլը, մյուս կողմում՝ դաստվածների բազմությունն է՝ Տրդատ թագավորի գլխավորությամբ, որ աղաքինում է հայցում Սբ. Գրիգորից: Մայր եկեղեցուց աջ եւ ձախ դասկերվում են Արարատը՝ Նոյյան տաղանով, եւ Արագածը՝ Լուսավորչի կանթեղով, իսկ կենտրոնական վերին մասում Սբ. Երրորդությունն է՝ Նայր Աստծո, վար իջնող աղավնածեւ Սուրբ Նոգու եւ ոսկե մուրճը ձեռքին ու հրեշտակների բազմությամբ դեղի երկիր իջնող Միածինը³⁹:

Այս թեմայով առաջին տողագիր փորագրատպակերը (նկ. 10) տեղ է գտել Միմեռն Ա Երեւանցու (1763-1780 թթ.) հրատարակություններից մի քանիսում: Այն ոչ միայն արվեստի եւ գրական երկի միասնության ու փոխընդման գեղեցիկ օրինակ է, այլ նաեւ լավագույնս արտահայտում է Սբ. Էջմիածնի՝ որդես հայ ժողովրդի ազգակենտրոնության եւ ազգահավաքման գաղափարը: Այստեղ դասկերն ուղեկցվում է Միմեռն կաթողիկոսի բանաստեղծության տողերով, որոնք թե՛ շրջանակում են դասկերը եւ թե՛ գտնվում են դասկերի ներսում, ուր թեմատիկ շորս դրվագներից յուրաքանչյուրին կից բերված է համադաստախան բանաստեղծական մեկ տուն: Չույզ շրջանակների մեջ ընդգծված «ՄԿ» եւ «ԳՄ»

Նայոց գրերի գյուտը եւ լուսավորչության սարածումը

Գրիգոր Լուսավորչի վարդապետությունից եւ հայոց քրիստոնեացումից հետո հաջորդ կարեւոր լուսավորչական իրադարձությունը հայ գրերի ստեղծումն էր Մեսրոպ Մաշտոցի կողմից: Նայոց այբուբենը դարձավ հայերին միավորող հզոր մի ուժ, հայ ազգի լեզվական եւ մշակութային ինքնության եւ անկախության լուսատու: Մաշտոցի կենսագիր Կորյունը իր ուսուցչի գործը համեմատում է Մովսես մարգարեի առաքելության հետ, երբ վերջինս Օրենքի տալիստակները ձեռքին իջնում է Մինայի լեռից՝ իր ժողովրդին փրկելու համար: Նմանապես, գրերի գյուտով, ինչպես ասում է Կորյունը, փրկությունը վերջնականապես հաստատվեց Նայոց աշխարհում, որովհետեւ Քրիստոս ինքը, առաքյալները եւ մարգարեները եկան Արարատյան աշխարհ եւ հայրենախոս ու հայաբարբառ դարձան⁴⁴: Ավելին, ըստ Կորյունի՝ Մաշտոցին առավել մեծ բախտ բաժին ընկավ, քան Մովսեսին, որովհետեւ նրան ցնծությամբ դիմավորելու դուրս եկան եւ մեծ լուսավորչություն ընդունեցին հայոց արքան, շքախումբը եւ ամբողջ ժողովուրդը⁴⁵:

Մաշտոցյան այբուբենի ստեղծումը վճռորոշ դեռ խաղաց Նայաստանի քրիստոնեացման գործընթացում: Ի սկզբանե Աստվածաշունչը, առաջ՝ հայրաբանական ու ծիսական գրականությունը թարգմանելու գործիքից այն շատ արագ դարձավ սեփական գրականություն զարգացնելու աննախադեպ հնարավորություն⁴⁶: Այսպիսով հիմնվում են հայոց դրոշմը ու դրոշմությունը: Բայց գրերի ստեղծումը Մաշտոցը չէր կարող իրագործել առանց Սահակ Մեծ կաթողիկոսի եւ Վռամշատուհի արքայի աջակցության: Ինչպես Գրիգորի եւ Տրդատի օրոք էր, այս ազգապահպան որոշման մեջ եւս հայ հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունները հանդես են գալիս միակամ ու միաբան, որ ցույց է տալիս հայոց այբուբենի ոչ միայն կրոնական կարեւորությունը, այլ նաեւ՝ մշակութային եւ քաղաքական⁴⁷:

Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի լուսավորչական օրինակներ մեզ հասել են միջնադարյան հայ մանրանկարչությունից, հատկապես՝ *Նայսմավորքների* մեջ յուրաքանչյուրի տոնին համադաստասիան տեքստի կողքին արված լուսանցանկարներից: Ծաղկողները սովորաբար Սբ. Մաշտոցին լուսավորել են հայ վանականի սեւ հագուստով, վարդապետի գավազանով, ձեռքին՝ բացված գիրք, իսկ Սբ. Սահակին՝ հայ հովվապետին բնորոշ շքեղ հանդերձով, խուրով եւ գավազանով: Տարածված էր նաեւ այս երկու գործիչների միասին լուսավորումը⁴⁸:

Նայ մանրանկարչությունից հայտնի կերպարի նմանությամբ են փորագրված հայ տղագիր գրքերում հանդիպող Մաշտոցի լուսավորչները: Մաշտոցին ամբողջ հասակով կանգնած, լուսավորչական դիմանկարչության ոճով արված գրավուր է տղագրվել Ներսես Շնորհալու *Ընդհանրական* գրքում⁴⁹: «Մեծ

թարգմանիչ Սբ. Մեսրոպ վարդապետը», ինչդեռ նշված է դատկերի ներքեի գրության մեջ, Աստծո աջի օգնությամբ, երկնային հղացմամբ է ստեղծում հայոց գրերը, որ աջ կողմից իջնող լույսի միջոցով հասնում է Մաշտոցին: Նա աջ ձեռքում դահել է հայոց գրերը, իսկ ձախում՝ Սբ. Գիրքն է: Մեն վարդապետը սովորական վանահոր հագուստով է եւ գավազանով (նկ. 12):

Նայոց թարգմանչական եւ վարդապետական դրոշմի գործիչների խմբակային փորագրանկարներ են տղագրված Մխիթար Սեբաստացու *Բառգիրք հայկազեան լեզուի* (1749-1769) եւ *Քերականություն գրաբար լեզուի* (1770) վեներտիկյան գրքերում: Մխիթարյանների անդրադարձը V դարի հայ փառավոր անձերին լատահական չէ. նրանք իրենց համարում էին այդ մարդկանց հոգետր ժառանգներն ու գործի շարունակողները՝ նոր լուսավորիչներ, «թարգմանչական երկրորդ դրոշմ»: Մխիթարյանների դրոշմը գաղափարական հաղորդակցություն էր ստեղծում Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ՝ իրար մոտեցնելով հայկական եւ եվրոպական մշակութային ժառանգությունները⁵⁰:

Բառգրքի փորագրության մեջ միասին դատկերված են Սբ. Սահակ Պարթեւը, Մեսրոպ Մաշտոցը, Գրիգոր Նարեկացին եւ Ներսես Շնորհալին՝ խորհրդանշելով հայ դրոշմության ծնունդը, շարունակումն ու ծաղկումը հաջորդ դարերում (նկ. 13): Ներքեում քառատող է՝ դատկերվածներից յուրաքանչյուրին գովերգող խոսքերով. Սահակ Պարթեւը՝ «գիտակ տեսեան», Մեսրոպ վարդապետը՝ «հաստիչ գրոց հայկեան», Ներսես կաթողիկոսը՝ «քաջ շափաբան», իսկ Գրիգոր Նարեկացին՝ «հոռտոր անգուգական»: Նորիվածքը կատարված է բարձր վարդապետությամբ, գծանկարի ճշգրիտ կառուցմամբ: Կերտարներն աչքի են ընկնում կենդանի, դինամիկ դատկերումով, բնավորությունների եւ խառնվածքի արտահայտչականությամբ:

Քերականություն գրքի գրավյուրան ունի դատկերագրական այլ լուծում: Այստեղ դասավանդման տեսարան է սքք. Մաշտոցը եւ Սահակը նստած են իրենց աշակերտների դիմաց (նկ. 14): Ինչդեռ նշված է ներքեի տողերում՝ «մեծն մեսրոպ ըզ դատանիս ուշիմս կրթեր՝ քերթողաբար ըզ հայ լեզուն լոյս աներ: սբն. իսահակ քերթողահայր անդէն նստեր, զուսեայսն յաթեն իսկ առաքել խորհրդակցեր»: Այնուհետեւ տրված են յոթ աշակերտների անունները. «Այս է զմովսես, զդաւիթ, զմամբրէ եւ զեղիշէ, զդագար, զեզնակ եւ զատողիկ եւ զայլ ընտրե»: Նախորդ դատկերի նմանությամբ, այստեղ եւս տարբեր ժամանակներում ադրած հայ գործիչները համատեղ ներկայացված են մեկ նկարում՝ շեշտելով նրանց գաղափարական միասնությունը եւ ազգանվեր գործը: Նրանք հայ դատմագրության ներկայացուցիչներ են եւ իրենց համարել են մաշտոցյան դրոշմի հետետորդներ: Ուշագրավ է, որ աշակերտները կրում են կաթոլիկ հոգետրականներին բնորոշ փոքր, կլոր թասակ, ինչը հավանաբար

միաժամանակ ցանկանում է խորհրդանշել նաև Մխիթարյան հայերին:

Աշակերտների ուսուցանման տեսարանը նույնդես դառնում է հայ ղափառական անձանց համատեղ ղափառող կոմպոզիցիոն լուծումներից մեկը: Այսպես կարելի է վարդապետության-վարժապետության, կրթության եւ լուսավորության դերը ազգային ավանդույթների եւ քաղաքակրթության շարունակականության, ինչպես նաև՝ հոգեւոր-մշակութային վերելքի համար: Դասավանդման տեսարան ղափառող մանրանկարներ հայտնի են միջնադարյան հայ արվեստից, ինչպես՝ «Մկրտիչ եւ Կիրակոս Երզնկացիների դասավանդումը»՝ 1334 թ. *Մեկնութիւն* գրքից, կամ «Գրիգոր Տաթևացին աշակերտների հետ» մանրանկարը՝ 1449 թ. *Մեկնութիւն Սաղմոսաց* ձեռագրից, որը հետագա դարերում մի քանի անգամ ընդօրինակվել է⁵¹: Այս ավանդույթը շարունակություն է գտնում հայ հնատիղ գրքերի ղափառագարդման մեջ, ինչպես, օրինակ՝ Տաթևացուն ղափառող Կ.Պոլսյան երկու փորագրաղապները, որոնցից առաջինը նրա *Գիրք Նարցմանց* աշխատության 1720 թ. տղագրության մեջ է⁵² (նկ. 15), իսկ երկրորդը՝ *Քարոզգիրք, Չմերան հատորի* 1740 թ. Աբրահամ Թրակացու տղագրության մեջ: Երկու հորինվածքները նման են իրար՝ գործողությունների ղափառողական բնույթով, խմբված հոգեւորական աշակերտների առկայությամբ: Ի տարբերություն մանրանկարների, այստեղ ներմուծված են Գրիգոր Լուսավորչի կանթեղի հանձնումը մեծ աստվածաբան վարդապետին՝ որդես տարգել, ինչպես նաև նրա ուսուցիչ Նովիան Որոտնեցու կերտարը՝ որդես վարդապետական գործի ավանդույթների շարունակություն: Որդես միջավայր փորագրիչներն ընտրել են դրախտունը՝ ղափառելով վանքի կամարակաղ սրահները: Բացի Տաթևացուց, իրրեւ վարդապետ է ղափառել, օրինակ՝ Եզնիկ Կողբացին՝ 1762-63 թթ. Չմյուռնիայում տղագրված *Գիրք ընդդիմութեանց* աշխատության մեջ (նկ. 16), կամ XVIII դարի կաթողիկոս Աղեքսանդր Ա Ջուղայեցին՝ *Ստեփանական վիճարանություն-Տաղարան գրքում* (1783, Կ.Պոլիս):

Այսպիսով, XVII-XVIII դարերում հայ տղագրությունը հարստանում է ղափառական եւ վարքագրական գրքերի առաջին հրատարակություններով, որոնց տեսականին աստիճանաբար ընդլայնվում է: Այս ժամանակաշրջանում լույս են տեսնում ինչպես հայ դասական, այնպես էլ ժամանակակից ղափառագիրները, կարելի է նաև գաղափարական խորհրդանիշներ են ձեռք բերում հայ ազատագրական ղափառն ու ազգային միասնականության ոգին նշանավորող ղափառական հերոսական դեմքերը եւ սրբացված ղափառական կերտարները:

Պատկերագրության առումով ուսումնասիրված փորագրաղապները բաժանվում են երկու խմբի. ա) ղափառական սրբացված անձանց ղափառումը

ամբողջ հասակով կանգնած, դիմադաստերային ժանրի օրենքների համաձայն, բ) թեմատիկ-սյուժետային տատկերներ, որոնք երբեմն էլիկական սկզբունքով են կառուցված՝ մի նկարում ներկայացնելով հաջորդական դատմական իրադարձություններ, ինչդեռ, օրինակ՝ Ղայոց դարձի տատկերումը, Գրիգոր Լուսավորչի տեսիլքը, հայ դրոշմի հիմնադրումը եւ շարունակությունը: Այս փորագրատատկերները գերծ շեն խորհրդանշական, այլաբանական մանրամասների ներմուծումից՝ ինչդեռ Արարատ լեռը՝ Նոյյան տաղանով, Արագած լեռը՝ Լուսավորչի կանթեղով, Էջմիածնի տաճարը են:

Ի սկզբանե տղագրությունը եվրոպական արհեստ էր, եւ բնական է, որ հայերը, իրենց առաջին տղագրական փորձերը կատարելով օտար երկրներում, կամա թե ակամա դեռ է հարմարվելին նոր տատկերագրական ոճի թելադրանքին եւ անխուսափելիորեն կրեին տատկերագրական նոր ավանդույթների ազդեցությունը: Բայց արդեն հայկական միջավայրում, հայ հնատիպերը շարունակում են զարգացնել եվրոպական փորագրանկարչության ավանդույթները, եւ առաջին հայ փորագրիչները, օտարագրի փորագրիչների աշխատանքներից կրած ազդեցությամբ հանդերձ, իրենց գործերին սկսում են հաղորդել արեւելյան բնորոշ գծեր, բոլորովին այլ զեղազիտական ընկալումներ, ոճական եւ ձեւաբանական նորարարական լուծումներ:

- 1 Մ. Ներսիսյան, *Չայ ժողովրդի նոր տատկության էջերից*, Եր., 1982, էջ 11-22:
- 2 M. Karapétian, «La littérature historique arménienne (Ve-XXe siècles)», *Arménie. La magie de l'écrit*, catalogue de l'exposition, sous la direction de Claude Mutafian, Marseille, centre de la Vieille Charité, 2007, p. 134-136.
- 3 R.Kévorkian, «L'imprimerie et l'édition arméniennes aux XIII-XIX siècles», *Arménie impressions d'une civilization*, catalogue de l'exposition, 2011, pp 269-273.
- 4 Mahé J-P., «Entre Moïse et Mahomet. Réflexions sur l'historiographie arménienne», *Revue des études arméniennes*, 23 (1992), p. 121-153; Նոյմի՝ « L'alphabet arménien et les Saints Traducteurs », *L'alphabet arménien*, Centre culturel Sahak-Mesrob, Marseille 2006, p. 29-76:
- 5 Անդ: Տեւս մաեւ: Ն. Ղարիբյան, «Երուսաղեմածին աղբյուրները Չայոց դարձի տատկության մեջ», *Բանբեր Սասնեմադարանի* 21 (2014), էջ 405-418, եւ N. Garibian, «La Jérusalem du IV s. et le récit de la conversion de l'Arménie », *Mélanges Jean-Pierre Mahé*, Travaux et Mémoires 18, Collège de France, Paris 2014, p. 353-368.
- 6 Կ. Գուլբերտով, «Գրական մշակույթ եւ ինքնություն», *Arménie. Impressions d'une civilization*, p. 368-369.
- 7 M. Pehlivanian, «L'histoire de l'imprimerie arménienne (1512-1800)», *Arménie. La magie de l'écrit*, pp. 305-312.
- 8 S. Aslanian, «Reflections on Post Armenians and Five Centuries of Global Armenian Print Culture » *The Armenians*, UCLA department of history, September 1, 2012, p. 7-12.
- 9 *Չայ գաղթաշխարհի տատկություն* (միջմադարից մինչև 1920-ական թթ.), հտ 3, Եր., 2013, էջ 168:
- 10 Kévorkian, «L'imprimerie et l'édition arméniennes...».
- 11 Ռ. Իշխանյան, *Չայ գիրքը 1512–1920*, Եր., 1981, էջ 73:

- 12 Ինչդեռ՝ Արիստոտել, Եվագր Պոնոսացի, Հովսեփ Ֆլավիոս, Եզոպոս և այլք, տես՝ Kévorkian, «L'imprimerie et l'édition arméniennes».
- 13 Karapétian, «La littérature historique arménienne...».
- 14 D. Kouymjian, «Une histoire contemporaine 1669», *Le livre arménien de la Renaissance aux Lumières: une culture en diaspora*, catalogue de l'exposition, bibliothèque Mazarine, Paris 2012, p. 99-100.
- 15 R. Kévorkian, «La somme historiographique des Mékhitaristes», *Le livre arménien de la Renaissance aux Lumières*, catalogue de l'exposition, Paris 2012, p. 59-62.
- 16 <http://greenstone.flib.sci.am/> Armenian Rare Books
- 17 Ստ. Մալխասյանց, *Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց*, Ներածություն, Եր., 1981, էջ 5-91:
- 18 «Դաշանց թղթի» մասին տես՝ Z. Poghossian, *The Letter of Love and Concord. A Revised Diplomatic Edition with Historical and Textual Comments and English Translation*, Leiden-Boston 2010; N. Garibian, «Costantino nella tradizione ecclesiastica armena», *Enciclopedia Costantiniana sulla figura e l'immagine dell'imperatore del cosiddetto Editto di Milano*, Enciclopedia Italiana Treccani, Roma 2013, vol. II, pp. 441-461; Ն. Դարիբյան, «Կոստանդին Մեծի կանոնը եւ դատկերը հայոց ծիսական ավանդույթում», *Բանբեր Սատենադարանի* 22 (2015), էջ 281-302:
- 19 Գ. Լևոնյան, *Հայ գիրքը և տղազրության արվեստը*, Եր., 1946, էջ 130-131:
- 20 Թ. Մ. Վան Լինտ, «Հայ դատմության մեջ խորհրդանշական միտքը», *Arménie. Impressions d'une civilisation*, catalogue de l'exposition, Milan, 2011, p. 373
- 21 *Մովսես Խորենացի*, Ա, 11, Քննական բնագիրը եւ ներածությունը՝ Մ. Աբեղեանի եւ Ստ. Յարութիւնեանի, Եր., 1991, էջ 35:
- 22 *Հայ արվեստի դատմություն*, Ա. Աղայան, Հ. Հակոբյան, Մ. Հասարթյան, Վ. Ղազարյան, Եր., 2009, էջ 68-70: Տես նաև Լ. Ազարյան, *Վաղ միջնադարյան հայկական քանդակը*, Եր., 1975:
- 23 Տես Չ. Հակոբյան, «Օձունի կոթողի դատկերների մեկնաբանման հարցի շուրջ», *Էջմիածին*, 2005/Ա, էջ 75-89:
- 24 *Հաղագս Պատկերամարտից*, 42, տես Երուանդ Մելքոնեան, «Վրթանես Քերթովը և դատկերամարտութիւնը», *Էջմիածին*, 1970, Չ-է, էջ 86-97,
- 25 Ս. Տեր Ներսեսյան, *Հայ արվեստը միջնադարում*, Եր., 1975, էջ 64: Տես նաև H. Perperian, «La mosaïque de saint Grégoire l'illuminateur à Aya Sofia», *Andastan*, n. 8-9, 1958, p. 113-131.
- 26 Այս քանդակի մեկնաբանման մասին մանրամասն տես՝ E. Vardanyan, "The Sculptured Dome of Horomos Monastery Zamatun. An Armenian Apocalypse", *Horomos Monastery: Art and History*, Collège de France, CHCByz, Monographies 50, Paris 2015, p. 237-300.
- 27 *Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան*, Եր., 2012, էջ 222-227:
- 28 Գրիգոր Լուսավորչի դիմանկարների մասին տես՝ Ս. Տեր Ներսեսյան, *Հայ արվեստը միջնադարում*, Եր., 1975, էջ 64: Տիրգրան Հոնենցի որմնանկարների մասին տես՝ N. Thierry, "La pittura murale di Ani", *Ani. Documenti di architettura armena*, 12, Milano 1984, p. 68-71; Հայոց դարձի դատկերների մասին տես նաև՝ N. Garibian, "Costantino...".
- 29 Ն. Դարիբյան, «Կոստանդին Մեծի կանոնը եւ դատկերը...»:
- 30 Անդ: Տես նաև Ա. Գեորգյան, *Հայկական մանրանկաչություն*, դիմանկար, Եր., 1982, ծանոթագրություններ:
- 31 *Հայ արվեստի դատմություն*, Եր., 2009, էջ 154-160:
- 32 *Աք. Էջմիածին 303-1903*, դատկերագարո նկարագիր, Վեներտիկ, Սք. Ղազար, 1903, էջ 2:
- 33 Երկուսն էլ Ամսոնիո Բորտոլիի տղազրությամբ:
- 34 Տրդատ թագավորը նույնպես մեծ ավանդ ունի քրիստոնեության քարոզման և տարածման մեջ, ուստի հայ արվեստում նրա խոնարհ և հավատացյալ թագավորի կերպարն անբաժան է Աք. Գրիգոր քահանայադեպի դատկերումներից:
- 35 Վարագի՝ որդես հեթանոսության խորհրդանշի մասին տես՝ Ս. Պետրոսյան, «Ռ՞վ էր Գրիգոր Լուսավորչին չարչարողը, Տրդատ Արշակունին, թե՞ Ներսեհ Սասանյանը», *Պատմա-քանդակարանական հանդես*, 2001/3, էջ 32-47:
- 36 N. Garibian de Vartavan, *La Jérusalem Nouvelle et les premiers sanctuaires chrétiens de l'Arménie*, Fribourg, London, Erevan 2009, p. 232-255.

- 37 Այս մասին ավելի համաձայնալից տե՛ս Ն. Ղարիբյան, «Երուսաղեմն անհիմն աղբյուրները Հայոց դարձի լուսամտի մեջ», AIEA 13-րդ համաժողովի նյութեր, Եր., հոկտեմբեր, *Քանթեր Սաստեմադարանի*, 21 (2014), էջ 405-418; Նույնի՝ «The Sacred Memory of Jerusalem in the Caucasus: Constructing Christian Identity», *Memory and Identity in the Middle Ages: The Construction of the Cultural Memory in the Holy Land (IV-XVI centuries)*, Միջագային միջգիտակարգային գիտաժողով, Ամստերդամ, 26-27 մայիսի, 2016:
- 38 Ք. Ավետիսյան, «Էջմիածնի Մայր տաճարի լուսկերպերը հայ արվեստում», *Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք*, 2-3 (2014-15), էջ 88-97:
- 39 Վ. Դերիկյան, «Սուրբ Էջմիածինը հայ արվեստում», *Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի թաշտոնաթերթ*, «Քրիստոնյա Հայաստան», 2011, Մայիս Բ, էլ. հասցե՝ <https://krishayas.wordpress.com>:
- 40 Վերջինս հնդկահայ մեծահարուստ Գրիգոր Չաքիկյան-Միքայելյանն է, ում միջոցներով Սիմեոն հայրապետը կառուցեց Ս. Էջմիածնի տղարանը և թղթի գործարանը:
- 41 Դերիկյան, «Սուրբ Էջմիածինը հայ արվեստում»:
- 42 Նոր Նախիջևանի Սբ. Խաչ տղարան, 1790:
- 43 Ավետիսյան, «Էջմիածնի Մայր տաճարի լուսկերպերը...»:
- 44 *Կորյուն, Վարք Մաշտոցի*, ժա, աշխարհաբար թարգմ., մերած., ծանոթ.՝ Մ. Աբելյան, Եր., 1962:
- 45 Այս մասին տե՛ս Ղարիբյան, «Երուսաղեմն անհիմն աղբյուրները...»:
- 46 Անդ:
- 47 Գ. Ուլուհոճեան, «Լեզու և գիր», *Arménie. Impressions d'une civilization*, catalogue de l'exposition, Milan 2011, էջ 365-366:
- 48 Գետրոգյան, *Հայկական մանրանկարչություն*. դիմանկար, էջ 5-15:
- 49 Տոմ. Գրիգոր Խլղարյանց, Սանկտ Պետերբուրգ, 1788:
- 50 S. Haroutyunian, «Les traductions des Mékhitaristes», *Arménie. Impressions d'une civilization*, p. 323-325.
- 51 Գետրոգյան, *Հայկական մանրանկարչություն*, դիմանկար, էջ 213-217:
- 52 Գրիգոր Մարգվանեցու հեղինակած այս փորագրադատկերը վերատպվել է նաև նույն գրքի 1729 թ. Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու հրատարակության մեջ:

LE SYSTÈME D'ILLUSTRATION DES INCUNABLES ARMÉNIENS
AUX XVII-XVIII SIÈCLES

NAZÉNIE GARIBIAN

Docteur en histoire de l'art

Matenadaran, Professeur Associé à l'YAFA

ANI YENOKYAN


Maître en histoire de l'art

Chargée de cours à l'YAFA

Aux XVII-XVIII siècles, en vue d'encren l'esprit de patriotisme chez les arméniens, de réveiller leur conscience nationale et de préparer ainsi la lutte de la libération, une importance sans précédent est donnée au genre historique. Parallèlement, l'imprimerie arménienne connaît, dans cette même période, un développement considérable, encourageant de ce fait la publication des livres historiques; par ailleurs, non seulement des sources historiographiques, mais aussi des oeuvres contemporaines. Dans ce contexte, une attention particulière est accordée au système et au choix des illustrations des publications historiques et hagiographiques. Elles incluent surtout des événements et des personnages, historiques ou légendaires, qui peuvent symboliser l'identité du peuple arménien, ses valeurs nationales et ses aspirations à la liberté. Tels sont, par exemple, la victoire de Hayk contre Bel, l'histoire de la conversion des arméniens au christianisme, la vie et l'enseignement de saint Grégoire, l'invention de l'alphabet arménien et la fondation de la littérature nationale. A part des représentations singulières de personnages comme Mesrop Mashtots, Sahak Parthev et autres, des portraits de groupe figurant les maîtres de l'école de traducteurs et théologiens nationaux, entourés de leurs disciples, commencent à circuler plus fréquemment. Ces compositions insistent sur le rôle de la relation entre maître et disciple, de l'enseignement et l'instruction, qui sont d'une importance primordiale pour la réalisation des objectives nationales.



1. Հայ տղազրության աշխարհագրությունը 1512-ից մինչև XIX դար. *քարտեզը*՝ Հարություն Ուայմոնդ, *Գեորգյան*
2. *Հայկը հարթում է Բելիմ*, փորագրատպակեր Մ.Չամչեան «Պատմություն Հայոց», հտ. 3, Վենետիկ, տղ. Ա.Բորտոլի, 1784 թ.



49


ԳԵՏԱՌԻԹԻՆ
Ն Ա Յ Ո Յ

ԳԵՏԱՌԻԹԻՆԻ ՄԵՐ ԲԱՅՈՒԳԵԼԻ ՆԵՐԻՑ
 արարչությունն այլևայլ անոց : յորս սոց
 մեք էրք ի թողալարձ ծովն սխախտ հողմոց
 յարձուկ լնչ և ճարտարունչ արարիկնայ ի
 սիրտնն անտի Ի հայկոց և այլո՞ ի բող-
 և լնչն ինչ նախնայ և նորեկնայ : Իբր զի յանիստանոց
 ընկնացս զանոյն ձեռնայլ անկողով գրայրս : և եր զի ի
 ստորագրեք մեքից թանի տաճարանայ յաւեստ գրանցեր :
 Իբր զի խաղաղութնն անդարդալեան սերկնայլ զանոյն
 սոցս էրք ի նառնանդասի ի բարեկարգու զնախն : և
 եր զի անհանդուս վրդովնայ ստանիս տասաներ ի յազ-
 մանս ծիանոց արկնայր Խաղալ լնչ ներքո և արտալոց :
 Իբր զի յարձանանս զանապաղիս հայկոցս գիցցալոց

Է G ՏԵ



3



4




5



6

3. Գրիգոր Լուսավորիչ, «Յայսմավորք», Կ.Պոլիս, տոմ. Գր. Սարգվանեցու, 1706 թ.
4. Գրիգոր Լուսավորչի չարչարանքները և Շայոց դարձը լուստկերող փորագրադասկեր, «Յայսմավորք», Կ.Պոլիս, տոմ. Գր. Սարգվանեցու, 1706 թ.
5. Լուսավորչի չարչարանքներից մեկը լուստկերող գրավյուրա, «Դաշանց թուրթ», Կ.Պոլիս, տոմ. Գր. Սարգվանեցու, 1719-1710 թթ.
6. Շայոց դարձը և Գրիգոր Լուսավորչի չարչարանքները, 70 x 90 սմ, առանձին փորագրադասկեր, Կիեմնա, տոմ. Սահղեսի Յոհան մելիքի որդի Յակոբ, 1731 թ.



7. Հայոց մկրտութիւնը, Մ. Եղորդացի «Վարք Սբ. Գրիգոր Լուսավորչին», Վենետիկ, տղ. Բորտոլի, 1749 թ.
8. Գրիգոր Լուսավորչին օրհնում է արքունական ընտանիքին, «Յայսմավորք», Վ.Պոլիս, տղ. Գր. Սարգվանեցու, 1706 թ.
9. Գրիգոր Լուսավորիչը օրհնում է արքունական ընտանիքին, «Հայսմավորք», Վան, ծաղկող՝ Խաչատուր Խիզանցի, 1596 թ.
10. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը, Սիմեոն Երևանցի «Գիրք որ կոչի Պարտավճար», Էջմիածին, տղ. Սբ. Գրիգոր Լուսավորիչ, 1779-1783 թթ.



Տաճոր լուստեկրո՛ւ յորի սպա՛նի
 յատկապէս պարձանք՝ արամեան աղ
 զի

11




Յա՛մն անձնի՛ յանկն երկնի տաճոց Տաճարն Երուսաղիմի
 յաշխարհ ճարտար մեծ Յարգմանքն առջև մեզստեղ Վերջապէս
 զի


12



13



14



15

11. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը, Ստեփանոս Սյունեցի «Ողբք եւ հառաչանք», Լոր Լախիշեան, տղ. Ար. Խաչ, 1790 թ.
12. Մեսրոպ Մաշտոց, դիմափորագրադատակեր, Ներսես Շնորհալի «Ընդհանրական», Պետերբուրգ, տղ. Գր. Խլրարյանցի, 1788 թ.
13. Չայ երեսիների խմբադատակեր, Սխիթար Սեբաստացի «Բաղգիրք հայկազեան լեզվի», Վենետիկ, տղ. Ա.Բորտոլի, 1749-1769 թթ.
14. Մ. Մաշտոցը եւ Ս. Պարթեւը աշակերտների հետ, Մխ. Սեբաստացի «Քերականություն», Վենետիկ, 1770 թ., տղ. Ա. Բորտոլի
15. Գրիգոր Տաթեւացիմ աշակերտների հետ, Կ.Պոլսյան տղազ., ա) «Գիրք հարցմանց», տղ. Գր. Սարգվանեցու, 1720 թ.
16. Եզնիկ Կողբացիմ աշակերտների հետ, Կողբացու «Գիրք ընդդիմութեան», Չմյուռնիա, տղ. Մահտեսի Մարկոս, 1762-1763 թթ.



16

